ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

31 հունվարի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

10
(2860)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓՈՂ ԿԱ, ԲԱՅՑ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՉԵՆ ԼՈՒԾՈՒՄ

Հայաստան բռնի տեղահանված արցախցիներին մինչ այս փոխանցվել է 170 մլրդ 890 մլն 900 հազար դրամ գումար: Ցույց տանք՝ ինչպես: ՀՀ կառավարությունը եւ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը բռնի տեղահանված արցախցիների համար աջակցության ծրագրի շրջանակներում նրանց տրամադրեցին 100 հազար դրամ միանվագ եւ 40 000+10 000 դրամ: Ծրագրի իրականացման ընթացքում խնդիրներից խուսափել չստացվեց: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ մի քանի ընտանիքներ կան, որոնք չեն ստացել նշված հատկացումները դեռ հոկտեմբեր ամսից: Հարց է առաջանում՝ արդյոք 11 մլրդ պարտք ունեցող պետությունը կկարողանա ինտենսիվորեն փոխհատուցել արցախցիներին այն դեպքում, երբ ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը, 2024 թվականի բյուջեի համաձայն, կկազմի 340 մլրդ դրամ: ArmLur.am-ը Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությունից տեղեկացել է, որ 2023 թվականի սեպտեմբերի 24-ից ի վեր հաշվառվել են ավելի քան 115 հազար 500 անձ: Սեպտեմբերի 19-ի ռազմական գործողություններից հետո 170 մլրդ 890 մլն 900 հազար դրամ է փոխանցվել արցախահայերին օգնելու համար գործընկեր երկրներից եւ միջազգային կազմակերպություններից: Այսպես, Ճապոնիայի կողմից արցախահայերին տրամադրվել է 2 միլիոն դոլար, որը համարժեք է 820 մլն դրամի, ԱՄՆ-ի կողմից տրամադրվել է 11 մլն դոլար, որը համարժեք է 4 մլդ 716 մլն դրամի, Եվրահանձնաժողովի կողմից փոխանցվել է 10.4 մլն եվրոյին համարժեք 4 մլդ 506 մլն դրամ, Լատվիայի կողմից հատկացվել է 350 հազար եվրոյին համարժեք 151 մլն դրամ, Շվեյցարիայի կողմից տրամադրվել է 1,5 մլն ֆրանկին համարժեք 675 մլն դրամ, Կանադայի կողմից տրամադրվել է 2,5 մլն դոլարին համարժեք 1 մլդ 25 մլն դրամ. ստացվում է 155 մլրդ 893 մլն դրամ: Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից Հայկական Կարմիր խաչին է փոխանցվել 62 մլն դրամ: ՀԿԽԸ գործընկերների հետ համագործակցության շնորհիվ բռնի տեղահանված արցախցիներին աջակցելու համար ընդհանուր առմամբ կփոխանցվի 4 միլիարդ 67 միլիոն 900 հազար ՀՀ դրամի չափով աջակցություն, այդ թվում՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտե՝ 1 մլրդ 500 մլն դրամ, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ՝ 1 մլրդ 375 մլն դրամ, Կարմիր խաչի եւ Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիա՝ 920 մլն դրամ, Շվեյցարական Կարմիր խաչ՝ 190 մլն դրամ, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն՝ 82 մլն ՀՀ դրամ: Հետաքրքիր է՝ ինչի վրա են ծախսվել այս միլիարդներն այն դեպքում, երբ ահազանգերը քաղաքացիներից չեն դադարում. նրանք ամիսներ շարունակ չեն ստացել սոցիալական աջակցությունները, կենցաղային, սոցիալական լուրջ խնդիրներ ունեն:

Երեկ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները ԱԺ-ում փակ հանդիպում են ունեցել Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի հետ: Հանդիպումը իշխանական պատգամավորների նախաձեռնությամբ է տեղի ունեցել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ականների եւ Ավինյանի հանդիպումը մոտ 3 ժամ է տեւել ու բավականին հագիստ, ջերմ մթնոլորտում է անցել: Պատգամավորները քաղաքապետից մասնավորապես հետաքրքրվել են ձնամաքրման աշխատանքներից, տրանսպորտի ու աղբի խնդիրներից, ինչպես նաեւ վերջին շրջանում մեծ աղմուկ բարձրացրած թեմաներից՝ կարմիր գծերով ավտոկայանատեղիների համար նախատեսված տուգանքի եւ Օղակաձեւ այգու քանդման գործընթացի մասին: Ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, թեեւ քննարկման ժամանակ տարբեր կարծիքներ հնչել են, այդ թվում՝ բացասական, բայց Տիգրան Ավինյանի պարզաբանումները մեծ հաշվով բավարարել են ՔՊ-ականներին:



ՀՀ կառավարությունը նախագիծ է ուղարկել Ազգային ժողով, որը դատական համակարգում մեծ վրդովմունքի առիթ է հանդիսացել: Մասնավորապես, դատական համակարգում կարծիքներ են հնչում, որ, ըստ նոր նախագծի, դատավորը միայն 65 տարեկանը լրանալու դեպքում կարող է թոշակավորվել, իսկ ԲԴԽ ոչ դատավոր անդամը՝ անկախ տարիքից: Այսինքն՝ օրինակ՝ ԲԴԽ գիտնական անդամ Երանուհի Թումանյանը, ընդամենը մի քանի տարի աշխատելով ԲԴԽ-ում, 42 տարեկանում պետությունից թոշակ է ստանալու: Նա, լինելով գիտնական անդամ, եւ բարձր աշխատավարձ է ստանալու, եւ բարձր թոշակ ամբողջ կյանքում՝ ընդամենը 5 տարի աշխատելով: Առավել զավեշտալին այն է, որ, ըստ կարգավորման, նման թոշակ ստանալու են միայն այն անդամները, որոնք կդադարեն աշխատել օրենքը ուժի մեջ մտնելուց հետո, այսինքն՝ չի տարածվելու նախկին անդամների վրա: Ստացվում է, որ օրենքի փոփոխություն են անում բացառապես ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանի, նրա մտերիմ Երանուհի Թումանյանի, ԲԴԽ անդամ Վիգեն Քոչարյանի համար, ու դեռ խոսում են դատական համակարգի գրավչության մասին: Դատական համակարգում կեղծ են համարում նախագծի հիմնավորումը, որը վերաբերում է նաեւ ԲԴԽ դատավոր անդամներին: Կարծիքներ կան, որ նախագիծը մշակողները, եթե մի քիչ ազնիվ լինեին, գոնե կգրեին, որ նախկին անդամների վրա էլ է տարածվում, կամ բացառություն չէին անի, քանի որ օրենքի լավարկումը, անշուշտ, հետադարձ ուժ ունի: Այդ ձեւակերպումը ակնհայտ ապացուցում է՝ կոնկրետ իրենց նեղ շրջանակի ֆինանսական ապահովվածությունն են երաշխավորում՝ հարկատուների հաշվին:Ավելին՝ տարակուսանք է առաջացնում օրենքի հիմնավորման նաեւ այն հատվածը, ըստ որի՝ հեղինակների կարծիքով՝ ԲԴԽ դատավոր անդամները ԲԴԽ-ից հետո շարունակում են պաշտոնավարել ու երաշխիքներից օգտվել, իսկ ոչ դատավոր անդամները՝ ոչ: Պետք է գնահատել հեղինակ-շահառուների անկեղծությունը. նրանք ոչ թե առաքելություն են իրականացնում, այլ եկել են ԲԴԽ՝ հինգ տարի աշխատեն ու ամսական 1 միլիոնից ավելի գումար ստանան, հետո էլ շքեղ ծերություն ունենան:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՀՀ պաշտպանության նախարարությունը չի արձագանքում հանրության կողմից բողոքներին եւ նախարարի հրաժարականի պահանջին: Այս տարի՝ 2024 թվականին, բազմաթիվ ողբերգական դեպքեր տեղի ունեցան Զինված ուժերում, մասնավորապես՝ հունվարի 9-ին ժամկետային զինծառայողներից մեկն իրեն կցված հրազենից մահացու կրակ էր արձակել նույն դիրքում ծառայող սպաներից մեկի՝ 23-ամյա Կարեն Արայիկի Կարապետյանի վրա: Նույն հունվարի 9-ին ՊՆ N զորամասի պահպանության տեղամասում հայտնաբերվել էր ավագ լեյտենանտ Միքայել Սամվելի Դանիելյանի դին՝ հրազենային վնասվածքով: Այդ դեպքերին հաջորդեց հունվարի 14-ի ձնահյուսի տակ մնացած Բենիամին Վալերիի Մանուչարյանի (ծնված 2003 թ.), դեպքը: Այս դեպքերը հանրային լայն շրջանակներում առաջացրել են ՀՀ ՊՆ նախարարի եւ ԳՇ պետի պաշտոնանկության պահանջ: ArmLur.am-ը ՀՀ ՊՆ պաշտոնական հարցում էր ուղարկել՝ հետաքրքրվելով՝ 1.Ինչ է մտածում այս մասին Սուրեն Պապիկյանը: 2.Մարզասրահի բաստկետբոլի վահանակի ու կախիչի համար Նիկոլ Փաշինյանը մարզպետին ու Քաղշինկոմիտեի ղեկավարին հեռացրեց աշխատանքից, իսկ 2 զոհի համար չկամ պատիժ: Ինչ է նախաձեռնել ՊՆ նախարարը: 3. Հատկապես Վարդենիսի դիրքերում դեպքերը շատ են. ինչ վերլուծություն ունի ՊՆ-ն: 4. Նկատում ենք, որ դեպքերից հետո նախարարը գնում է դեպքի վայր, հրապարակվում են նրա խիստ հայացքով լուսանկարները, բայց դեպքերի կրկնությունից չենք խուսափում: Միայն դիրքեր գնալն ու նկարվելը ինչ է տալիս ՊՆ-ին: Պն գլխավոր քարտուղար Համլետ Բատիկյանը, մեր այս հարցերին ի պատասխան, գրել էր. «ՀՀ զինված ուժերում արձանագրված մահվան յուրաքանչյուր դեպքով հարուցվող վարույթներին զուգահեռ՝ անցկացվում են ծառայողական քննություններ, ՊՆ համապատասխան ստորաբաժանումներում համակողմանիորեն ուսումնասիրվում եւ վերլուծվում են մահվան դեպքերի հանգամանքներն ու պատճառները, ձեռնարկվում են միջոցներ առկա խնդիրների լուծման, հանցագործությունների կանխման, բացահայտման, կարգազանց եւ օրինախախտ զինծառայողներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



ԱՐՑԱԽ

«ԱՄԱՆՈՐԻՆ ՈՐԵՎԷ ՈՒՂԵՐՉ ԱՆԳԱՄ ՉԵՂԱՎ»

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է «Ժողովրդավարական համախմբում» կուսակցության նախագահ, քաղաքագետ Սուրեն Պետրոսյանի հետ:

-Պարոն Պետրոսյան, 2023 թվականին՝ Արցախի հայաթափումից հետո, հայտարարվեց, որ Արցախը 2024 թվականի հունվարի 1-ից դադարելու է որպես պետություն գոյություն ունենալ: Ի վերջո, Արցախն այսօր ի՞նչ կարգավիճակ ունի:

-Արցախը որեւիցե մեկը չի կարող լուծարել՝ ո՛չ Սամվել Շահրամանյանը, ո՛չ պատգամավորները, ո՛չ մենք: Հունվարի 1-ից հետո, բնականաբար, չի լուծարվել Արցախի Հանրապետությունը եւ, ընդհանրապես, պետական ինստիտուտները, բայց ինստիտուտները այնքանով են ինստիտուտ, որքանով որ նրանք գործում են, անում են գործառույթներ: Այս պահին Արցախի ինստիտուտները ունեն երկու առանցքային գործառույթ՝ մեկը՝ արտաքին միջավայրում, մյուսը՝ներքին: Արտաքին միջավայրում գործառույթն է միջազգային հանրության, միջազգային կազմակերպությունների շրջանակում իրավական առումով բաց պահել Արցախի էջը եւ վերահաստատել հավակնությունները Արցախի նկատմամբ իրավական կոնտեքստում: Ներքին մակարդակում, որ իրականում շատ ավելի կարեւոր է, պետք է առաջնորդել Արցախի համայնքը եւ մարդկանց մոտ վառ պահել այդ հավակնությունները, որ նրանք ունենան ցանկություն եւ հստակ տեսլական, որ վերադառնալու են Արցախ: Պայմանական իմաստով եթե ինչ-որ մեկը մեզ Արցախը նվիրի, հավատացե՛ք՝ որեւէ մեկին պետք չէ, եթե այնտեղ ապրող չկա: Այսօր մենք գիտենք, որ յուրաքանչյուր արցախցի ուզում է վերադառնալ իր տուն, բայց իրենց հետ որեւէ աշխատանք հանրային իմաստով չի տարվում, եւ, ընդհանրապես, բավարար չէ, որ փորձում են լուծել սոցիալական խնդիրներ, անհատների հետ հանդիպում են թաքուն եւ այլն. օրակարգը Արցախի, որպես այդպիսին, չկա, եւ այդ օրակարգը պետք է ձեւավորեն Արցախի իշխանությունները:

-Իսկ ժողովրդի վերադարձը ինչպե՞ս է հնարավոր կազմակերպել, հնարավո՞ր է նորից վերահինտեգրումով ապրել Արցախում:

-Դա տեսականորեն անգամ հնարավոր չէ, այսինքն՝ Ադրբեջանի կազմում ադրբեջանական անձնագրերով: Մինչեւ այս գործընթացներին հասնելը ճանապարհ կա: Այդ երկու կոմպոնենտի մասին որ խոսեցի, դրանք անհրաժեշտ ոչ բավարար պայմաններն են: Եթե մենք այդ անհրաժեշտը այս պահին չենք անում, դրա մասին խոսելն անիմաստ է: Ինչ-որ մարդիկ են ձեւավորվում, որոնք ասում են՝ գիտեք, մենք միջազգային հանրությունում կպահենք Արցախի օրակարգը բաց: Պատկերացրե՛ք՝ մենք միջազգային հանրությունն ենք, ինչ-որ մարդիկ ասում են՝ մենք այս հարցով ուզում ենք զբաղվենք, մեզ ասում են՝ դուք ո՞վ եք: Հայաստանի Հանրապետությունը էջը փակել է ընդհանրապես, Արցախի իշխանություններն էլ որեւիցե կերպ ո՛չ ձայն են հանում եւ ո՛չ էլ օրակարգ է ձեւավորված: Մենք չգիտենք՝ այդ առումով արցախցիներն ինչ օրակարգ ունեն, եւ իրականում նույնիսկ այս պահին եվրոպացի բազմաթիվ պաշտոնյաներ կան, որ ասում են, որ չգիտեն՝ արցախցիները ուզում են արդյոք վերադառնալ, թե ոչ: Այս օրակարգը ձեւավորում են առաջին հերթին նախ իշխանությունները, որոնք չպետք է վախենան ոչ մի ճնշումից, ոչ մի բանից չպետք է վախենանք: Բոլորի պահվածքը այսօր այնպիսին է, կարծես Արցախը կա, ե՛ւ Արցախի պատգամավորները, ե՛ւ Ազգային ժողովը իրենց բնականոն կյանքով են ապրում եւ ինչ-որ հարաբերությունների մեջ են մնացածի հետ: Կարող են լինել այդ հարաբերությունները եւ պետք է լինեն, բայց առանց ներսում օրակարգ գեներացնելու չի կարող այդպիսի բան լինել: Ինձ համար շատ զարմանալի էր, որ Ամանորին որեւէ ուղերձ անգամ չեղավ:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ՝ ԿԿՀ-ՈՒՄ

Նախորդ տարեվերջին՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի ընտրության խայտառակ տապալումից հետո, ԱԺ-ն հունվարի 25-ին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների պաշտոններում թեկնածուների ընտրության համար նոր մրցույթ է հայտարարել, վերջնաժամկետն էլ փետրվարի 5-ն է:

ԿԿՀ անդամի պաշտոնում ինքնառաջադրված թեկնածուների մրցույթն անցկացնելու է Մրցութային խորհուրդը, որը կազմված է Սահմանադրական դատարանի նախագահի, Մարդու իրավունքների պաշտպանի, Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունների, Հանրային խորհրդի եւ Փաստաբանների պալատի կողմից նշանակված ներկայացուցիչներից:

Կոռուպցիայի կանխարգելման մասին ՀՀ օրենքի համաձայն՝ մրցույթն անցկացվում է երեք փուլով, որոնցից առաջինը փաստաթղթերի ամբողջականության եւ համապատասխանության ստուգման (այսուհետ՝ փաստաթղթային ստուգման) փուլն է, երկրորդը՝ թեստավորման, իսկ երրորդը՝ հարցազրույցի:

Մրցույթին մասնակցելու հավակնություն ունեցող անձը, ի թիվս այլ անհրաժեշտ փաստաթղթերի, ներկայացնում է նաեւ բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ, որում ներկայացված տվյալները ստուգում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

Հարցազրույցի փուլի գնահատման արդյունքներով ամենաբարձր հանրագումարային միավորներ ստացած մասնակիցները ընդգրկվում են մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակում, որը Մրցութային խորհուրդը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին ցուցակի հրապարակմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

ԿԿՀ անդամներին ընտրում է խորհրդարանը: Անցած տարի, կոպտորեն թիրախավորելով ԿԿՀ նախկին նախագահ Հայկուհի Հարությունյանին եւ Նարինե Ավետիսյանին, մերժեցին:

«ԱՄԵՆԱԴԺԲԱԽՏ ՄԱՐԴՆ ԵՄ»

«Սերժ Սարգսյանի հրաժարականի օրը՝ ապրիլի 23-ին, գնացինք առաջին նախագահի մոտ ու տեսանք, որ ինքը նստած է շատ լուրջ, անգամ մռայլ արտահայտությամբ: Ասացինք. «Պարոն նախագահ, ամբողջ ժողովուրդը ցնծում է, ինչո՞ւ եք դուք այս տրամադրության մեջ»:

Ինքն ասաց մի նախադասություն, որը դուրս չի գալիս իմ հիշողությունից: Դա հենց նույն օրն էր, երբ շատ բաներ պարզ չէին՝ արդյոք Փաշինյանը դառնալու է վարչապետ, թե ոչ: Լեւոն Տեր-Պետրոսյանն ասաց. «Լսե՛ք, դուք չե՞ք հասկանում, այսօր ես ամենադժբախտ մարդն եմ Հայաստանում, որովհետեւ իշխանության է գալիս մի մարդ, որը կործանելու է եւ՛ Արցախը, եւ՛ Հայաստանը»:

Ինձ համար դա մի փոքր չափազանցություն հնչեց, բայց հիմա, որ նայում եմ, տեսնում եմ, որ Տեր-Պետրոսյանի կանխատեսումներն այնուամենայիվ բավականին հզոր էին»,- այս մասին «ԼուրջCast» հաղորդման ընթացքում ասաց ՀԱԿ փոխնախագահ Լեւոն Ջուրաբյանը:

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ

«ՄԱՖ ՔԼԱԲ»-ԻՑ՝ ԱԺ ՆԱԽԱԳԱՀ

ArmLur.am-ը գրել էր, որ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը եւ ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը նոր նախագիծ են հեղինակել, որով առաջարկում են առավոտյան 6:00-ից մինչ կեսգիշեր 00:00-ն ընկած ժամանակահատվածում արգելել քրեական ենթամշակույթի քարոզ պարունակող ֆիլմերի ու տեսալսողական հաղորդումների ցուցադրումը:

Ուշագրավ է, որ Ալեն Սիմոնյանը, որը մինչ ԱԺ նախագահի պաշտոնը ստանձնելը դարձել է քրեական ենթամշակույթի ակնհայտ տարրեր պարունակող ֆիլմերի կամ տեսանյութերի մասնակից, շատ դեպքերում հովանավորել է նման բնույթի նախագծեր, հիմա հանկարծ որոշել է դրա դեմ պայքար մղել:

ArmLur.am-ը ԱԺ նախագահի մամուլի քարտուղար Նելլի Ղուլյանից հետաքրքրվեց՝ ինչպես է ստացվել, որ մինչ ԱԺ նախագահի պաշտոն ստանձնելն Ալեն Սիմոնյանը քրեական ենթամշակույթի տարրեր պարունակող հումորային ֆիլմերի ու հոլովակների պրոդյուսինգով է զբաղվել, բայց հիմա դրա դեմ է պայքարում, ինչ է հիմա փոխվել:

Ի պատասխան մեր հարցի՝ ԱԺ նախագահի խոսնակն ասաց, որ նա երբեք քրեական ենթամշակույթի տարրեր պարունակող հումորային ֆիլմերի ու հոլովակների պրոդյուսինգով չի զբաղվել, ուստի տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը:

ArmLur.am-ը, սակայն, թերեւս կներկայացնի դրանցից մի քանիսը:

Դեռ 2015 թվականին աղմկահարույց մի տեսանյութ տարածվեց համացանցում այդ ժամանակ դեռ «Քաղաքացիական պայմանագիր» հանրային-քաղաքական միավորման անդամ Ալեն Սիմոնյանի մասնակցությամբ, որը զուգահեռ նաեւ պրոդյուսերական գործունեություն էր ծավալում:

Տեսանյութը «Փախուստ բանտից» ֆիլմից էր, որտեղ դերասանների ու շոուբիզնեսի տարբեր ներկայացուցիչների հետ որպես դերասան հանդես էր գալիս նաեւ Ալեն Սիմոնյանը: Նա նաեւ այդ ֆիլմի տնօրենն է եղել:

Ալեն Սիմոնյանի՝ բաց աղբյուրներում հրապարակված կենսագրական տվյալներից տեղեկանում ենք նաեւ, որ 2004-2010 թվականներին հիմնել եւ հանդիսացել է Հայաստանում առաջին՝ «Սիցիլիա» բաց մաֆիա ակումբի սեփականատեր:

Վերջինս նաեւ «Ալա Բալա Նիցա» գեղարվեստական ֆիլմի գծային պրոդյուսերն է, իսկ 2011 թվականից հանդիսացել է «No comment» ներկայացման տնօրեն, որտեղ, հումորին զուգահեռ, կան նաեւ քրեական ենթամշակույթի տարրեր:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԱՐՁԱԳԱՆՔԵԼ Է

Արտաքին գործերի նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը արձագանքել է Թուրքիայի խորհրդարանի պաշտպանության հանձնաժողովի նախագահ Հուլուսի Աքարի հայտարարությանը՝ Հայաստան-Ադրբեջան կարգավորման գործընթացի վերաբերյալ:

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ հանդիպումից հետո լրագրողների հետ զրույցում Հուլուսի Աքարը հայտարարել էր, որ Հայաստանը պետք է որքան հնարավոր է շուտ ընդունի Ադրբեջանի մեկնած խաղաղության ձեռքը, հակառակ դեպքում լուրջ վնասներ կկրի, ինչպես 44-օրյա պատերազմի դեպքում:

Հանրային հեռուստաընկերությանը տված հարցազրույցում Հայաստանի արտաքին գործերի փոխնախարար Վահան Կոստանյանը կարծիք է հայտնել, որ Թուրքիան շատ ավելի կառուցողական դեր կարող է խաղալ Հայաստան-Ադրբեջան կարգավորման գործընթացում:

Նրա խոսքով՝ Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացի շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունների կյանքի կոչումը, մասնավորապես՝ երրորդ երկրների քաղաքացիների եւ դիվանագիտական անձնագիր կրող անձանց համար սահմանի բացումը, դրական ազդեցություն կունենա թե՛ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների վրա, թե՛ ազդեցություն կունենա Հայաստան-Ադրբեջան կարգավորման գործընթացի վրա:

Փոխնախարարը նշել է, որ պաշտոնական Երեւանը սպասում է Անկարայի արձագանքին պայմանավորվածությունը կյանքի կոչելու մասով:

«Գիտեք, որ հայկական կողմում բոլոր ենթակառուցվածքներն արդեն իսկ պատրաստ են»,-ավելացրեց Կոստանյանը:

ԻՐԱՆԸ ՎՃՌԱԿԱՆ Է

Իրանի գերագույն առաջնորդի խորհրդական, արտաքին հարաբերությունների ռազմավարական խորհրդի ղեկավար Քամալ Խարազիին հանդպում է ունեցել «Օրբելի» վերլուծական կենտրոնում. հայտնում է Հայաստանում ԻԻՀ դեսպանատան տելեգրամյան էջը:

Նա իր ելույթում անդրադարձել է Իրան-Հայաստան պատմական եւ բարեկամական հարաբերություններին, դրանք ընդլայնելու՝ Իրանի վճռականությանը:

Նա ասել է, թե Իրանը պաշտպանում է տարածաշրջանի բոլոր երկրների անկախությունը, ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը եւ ոչ մի պարագայում չի ընդունում աշխարհագրական սահմանների փոփոխությունները:

Նրա խոսքով՝ Իրանը վճռական է ընդլայնել Հայաստանի հետ պատմական եւ բարեկամական կապերը եւ, որպես Հյուսիս-Հարավ եւ Արեւելք-Արեւմուտք տրանսպորտային երթուղիները միացնող հանգույց, պատրաստ է իր տնտեսական եւ գիտական ներուժն օգտագործել տարածաշրջանի զարգացմանն ու առաջընթացին ծառայելու համար:

Իրանի պաշտոնյայի այցը Հայաստան հաջորդում է նրա պարբերական այցերին տարածաշրջանի երկրներ, որի նպատակն է ուսումնասիրել ԻԻՀ ռազմավարությունները:

ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՆ

ՉԵՂԱՐԿԵԼ Է ԶԵՆՔԻ ԷՄԲԱՐԳՈՆ

Կանադայի կառավարությունը որոշել է չեղարկել Թուրքիային զենքի մատակարարման էմբարգոն:

Այս մասին հայտնում է Հայ դատի Կանադայի հանձնախումբը:

«Հայ դատի Կանադայի հանձնախումբը դատապարտում է Կանադայի կառավարության վերջին որոշումը՝ Թուրքիային զենքի մատակարարման երկարամյա էմբարգոն չեղարկելու վերաբերյալ: Այս որոշումը տագնապալի մտահոգություններ է առաջացրել կանադահայ համայնքում, քանի որ այն վտանգում է Կանադայի հավատարմությունը մարդու իրավունքներին, միջազգային անվտանգությանն ու արդարությանը»,- ասված է հանձնախմբի տարածած հայտարարության մեջ:

Չնայած Կանադայի արտաքին գործերի նախարարության կողմից 2019թ. հոկտեմբերին Թուրքիային զենք վաճառելու մորատորիում սահմանելուն՝ կառավարությունը 2020թ. գարնանը թույլ էր տվել L3Harris/WESCAM անօդաչու թռչող սարքերի տեխնոլոգիաների արտահանումը Թուրքիա:

«2020թ. սեպտեմբերին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ պատերազմ հայտարարելուց հետո ի հայտ եկան էական ապացույցներ Թուրքիայի կողմից սարքավորումները դեպի Ադրբեջան անօրինական տարանցելու վերաբերյալ, ինչը խախտում էր Կանադայի հետ իր պայմանագրային պարտավորությունները եւ հանգեցրեց Ադրբեջանի կողմից կանադական արտադրության WESCAM տեխնոլոգիաների ապօրինի օգտագործմանը Արցախում խաղաղ բնակչության դեմ: Ներքին հետաքննության եւ խորհրդարանական ստուգումների արդյունքում կառավարությունը 2021 թվականի ապրիլին չեղարկեց Թուրքիա արտահանման բոլոր թույլտվությունները:

Նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի ղեկավարությամբ՝ Թուրքիան հետեւողականորեն անտեսում է մարդու իրավունքները, ժողովրդավարական արժեքները եւ օրենքի գերակայությունը, պահպանում է պայմանագրային համաձայնագրերը խախտելու ռեկորդը: Զենքի էմբարգոյի վերացումը ոչ միայն հակասում է Կանադայի վաղեմի սկզբունքներին, այլեւ անտեսում է շարունակվող ագրեսիան եւ մարդու իրավունքների խախտումները, որոնք Թուրքիայի կողմից իրականացվում են տարբեր ժողովուրդների, այդ թվում՝ հայության նկատմամբ: Հայ դատի հանձնախումբը Կանադայի կառավարությանը խստորեն կոչ է անում վերանայել այս անխոհեմ որոշումը եւ սկզբունքային դիրքորոշում որդեգրել թուրքական կառավարության ռազմատենչության դեմ: Զենքի էմբարգոն հանելով՝ Կանադան միայն քաջալերում է նախագահ Էրդողանի ռեժիմին, եւ անգամ եւս իրեն վտանգում է մեղսակցություն ունենալ թուրքական ռեժիմի կողմից իրականացվող եւ հովանավորվող հանցագործությունների մեջ, որոնք սպառնում են հայերին, ինչպես նաեւ տարածաշրջանի այլ ժողովուրդներին: Նման քայլը մտահոգիչ ուղերձ է միջազգային հանրությանը եւ խաթարում է Կանադայի նվիրվածությունը մարդու իրավունքներին, խաղաղությանն ու արդարությանը»,- ասված է հայտարարության մեջ:

Հայ դատի Կանադայի հանձնախումբն ընդգծում է, որ Կանադայի կառավարությունը պետք է, կարճաժամկետ քաղաքական նկատառումների փոխարեն, առաջնահերթություն տա մարդու իրավունքներին, միջազգային անվտանգությանն ու արդարությանը:

Հանձնախումբը Կանադայի կառավարությանը կոչ է անում ականջալուր լինել կանադահայ համայնքի, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների եւ մարդու իրավունքների պաշտպանների մտահոգություններին:

«Թեեւ ի գիտություն ենք ընդունել զենքի արտահանման թույլտվությունները չեղարկելու կամ կասեցնելու կառավարության որոշումը այն պարագայում, երբ թուրքական կողմից չարաշահումների վերաբերյալ հավաստի ապացույցներ պարզվեն, մենք Կանադայի կառավարությանը կոչ ենք անում ընդհանրապես չեղարկել այս որոշումը եւ վճռական դիրքորոշում ընդունել թուրքական կառավարության ագրեսիայի դեմ՝ դրանով իսկ վերահաստատելով հավատարմությունը Կանադայի ժողովրդին բնորոշող սկզբունքներին»,- ասվում է հայտարարությունում:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՖՈՐՈՒՄ

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿ»-Ը՝ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ

Հայաստանի կառավարության ներկայացրած «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը ներկայացվել է Բրյուսելում մեկնարկած Global Gateway ներդրումային համաժողովի ժամանակ:

Համաժողովի շրջանակներում «Հարավային Կովկաս եւ Թուրքիա. Կենտրոնական Ասիայի եւ Եվրոպայի միջեւ ամուր կապող օղակ» թեմայով պանելային քննարկման ժամանակ «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը ներկայացրել է Հայաստանի տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Արմեն Սիմոնյանը:

Փոխնախարարն ասել է, որ ծրագրի հիմնական սկզբունքն այն է, որ բոլոր ենթակառուցվածքները, այդ թվում՝ ճանապարհները, երկաթուղիները, օդային ուղիները, խողովակաշարերը, մալուխները, էլեկտրահաղորդման գծերը, գործեն այն երկրների ինքնիշխանության եւ իրավասության ներքո, որոնցով դրանք անցնում են: «Աշխարհաքաղաքական վերջին զարգացումները ապացուցեցին, որ տրանսպորտային երթուղիների դիվերսիֆիկացիան կենսական անհրաժեշտություն է տարածաշրջանային շուկաներ ապրանքների մատակարարման շարունակականության համար: Եվ սա է պատճառը, որ Հայաստանի կառավարությունը նախագծել է «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությունը: Գործարկման դեպքում առաջին տարվա ընթացքում այն կապահովի 4,7 մլն տոննա բեռի եւ 300 հազար ուղեւորի փոխադրում տարածաշրջանի երկրներով: Մինչեւ 2050 թվականը Հայաստանի Հանրապետության երկաթուղային ենթակառուցվածքով տարածաշրջանային երկրների միջեւ փոխադրվող բեռների ծավալը կկազմի մոտավորապես 10 մլն տոննա», - ասել է Սիմոնյանը:

Համաժողովի շրջանակներում փոխնախարար Արմեն Սիմոնյանը երկկողմ հանդիպումներ է ունեցել տարբեր գործընկերների եւ միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ:

Միջոցառմանը մասնակցել են ոլորտը կարգավորող փոխնախարարներ Կենտրոնական Ասիայից, Հարավային Կովկասից եւ Թուրքիայից, ԵՄ անդամ պետություններից: Ներկա էին նաեւ մասնավոր ներդրումային ընկերությունների փորձագետներ, Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի փորձագետներ:

Ֆորումը նվիրված էր ԵՄ ընդլայնված հարեւանությունում առկա ենթակառուցվածքային հնարավորությունները օգտագործելուն՝ դյուրացնելու միմյանց միջեւ առկա առեւտուրը: Առանձին պանելային քննարկումների ժամանակ ներկայացվել են մասնակից երկրների ենթակառուցվածքների ներդրումային գրավչությունն ու առկա հնարավորությունները:

ԲԱՆԱԿԱՅԻՆ ԲԱՐՔԵՐ

ՊԱՐՏԱԿԵԼ Է ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Տիգրան Վիրաբի Սիմոնյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, ծառայելով ՀՀ ՊՆ N զորամասում, 26.07.2023թ. դրությամբ զբաղեցնելով նույն զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի 5-րդ վաշտի 2-րդ դասակի հրամանատարի պաշտոնը, կոչումով՝ ավագ լեյտենանտ, հանցագործության եւ հանցանք կատարած անձի բացահայտմանը խոչընդոտելու նպատակով պարտակել է հանցագործությունը՝ սպանության դեպքը, ինչպես նաեւ աջակցել է համածառայակցին ապօրինաբար կյանքից զրկած Արմեն Խաչատուրի Հովհաննիսյանին:

Այսպես, Տիգրան Սիմոնյանը, հանդիսանալով ՀՀ ՊՆ N զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի 5-րդ վաշտի 2-րդ դասակի հրամանատար, կոչումով՝ ավագ լեյտենանտ, նշված զորամասի հրամանատարի 12.07.2023թ. թիվ 017 հրամանի համաձայն՝ պարտադիր ժամկետային զինծառայողներ, շարքայիններ Մուրադ Գրիգորյանի, Արմեն Հովհաննիսյանի, Սամվել Մելոյանի, Անդրանիկ Ծատուրյանի, Ժորա Սահակյանի եւ Վարազդատ Հովհաննիսյանի հետ միասին 2023 թվականի հուլիսի 14-ից նշանակված լինելով մարտական հերթապահության նույն զորամասի պահպանության տեղամասի «Վասպուրական» մարտական դիրքում՝ որպես դիրքի ավագ, 2023 թվականի հուլիսի 26-ին՝ ժամը 16:30-ի սահմաններում, Արմեն Խաչատուրի Հովհաննիսյանից տեղեկանալով նրա կողմից համածառայակից Մուրադ Սերյոժայի Գրիգորյանին ամրակցված ԿԳ տեսակի ՍՊ 333 համարի գնդացրով վերջինիս մահացու հրազենային վիրավորում հասցնելու եւ ապօրինաբար կյանքից զրկելու դեպքի մասին, նույն պահին հնչեցրել է «այ բալամ, էս ի՞նչ արիր. երկու օրից իջնում էինք» արտահայտությունը: Այնուհետեւ ավագ լեյտենանտ Տիգրան Սիմոնյանը, ստուգելով Մուրադ Գրիգորյանի զարկերակը եւ համոզվելով, որ նա մահացած է, որպես դիրքի ավագ, չցանկանալով իր ղեկավարած մարտական դիրքում տեղի ունեցած սպանության դեպքով «խնդիրներ ունենալ» իրավապահ մարմինների աշխատակիցների, նաեւ վերադաս հրամանատարության հետ, բացի այդ, հաշվի առնելով այն, որ Արմեն Հովհաննիսյանը գտնվում է ցայտնոտային հոգեվիճակում, որպիսի հանգամանքը կարող է հանդիսանալ նրա կողմից նոր հանցանքի կատարմանը նպաստող պայման, պարտակել է հանցագործությունը՝ սպանության դեպքը, եւ առանց նախնական խոստման աջակցել է հանցանք կատարած անձին՝ Արմեն Խաչատուրի Հովհաննիսյանին. Տիգրան Սիմոնյանը, ծառայողական՝ իր նկատմամբ ստորադաս հանդիսացող զինծառայողներին հրամաններ տալու լիազորություններն օգտագործելով, «Վասպուրական» մարտական դիրքի ժամկետային զինծառայող Սամվել Գուրգենի Մելոյանի ներկայությամբ Արմեն Խաչատուրի Հովհաննիսյանին հրահանգել է ինչպես համածառայակիցներին, այնպես էլ դեպքից հետո մարտական դիրք մեկնած զորամասի սպաներին եւ իրավապահ մարմինների աշխատակիցներին խաբել եւ ասել, որ, իբր, Մուրադ Գրիգորյանն ինքնասպան է եղել ինքն իրեն հրազենային վիրավորում հասցնելու եղանակով, բացի այդ, Արմեն Հովհաննիսյանին հանձնարարել է Մուրադ Գրիգորյանի դիակի կողքին ընկած, վերջինիս ամրակցված ԿԳ տեսակի ՍՊ 333 համարի գնդացիրը մաքրել եւ այն դնել դիակի մեջքի վրա:

Արմեն Հովհաննիսյանը կատարել է ավագ լեյտենանտ Տիգրան Սիմոնյանի նշված հանձնարարությունները, նախ՝ ԿԳ տեսակի գնդացիրը մաքրել եւ զենքը դրել է Մուրադ Գրիգորյանի դիակի մեջքին, ապա՝ համածառայակիցներին, նաեւ դեպքից հետո մարտական դիրք մեկնած զորամասի սպաներին եւ իրավապահ մարմինների աշխատակիցներին խաբել եւ հայտնել է, թե, իբր, Մուրադ Գրիգորյանն ինքն իրեն հրազենային վնասվածք պատճառելու եղանակով ինքնասպան է եղել: Տիգրան Վիրաբի Սիմոնյանն իր հերթին 26.07.2023թ-ին՝ ժամը 16:47-ին, զանգահարել է իր անմիջական վերադաս՝ ՀՀ ՊՆ N զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի 5-րդ վաշտի հրամանատար Էդիկ Մղդսյանին ու պարտակել հանցագործությունը՝ զեկուցելով, թե, իբր, Մուրադ Գրիգորյանն ինքնասպան է եղել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՉԱՐԱՇԱՀԵԼ Է ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արարատի մարզի համայնքներից մեկի նախկին ղեկավարը չարաշահել է իր պաշտոնեական լիազորությունները եւ պետությանն ու համայնքին պատճառել 116 մլն դրամի վնաս: Քրեական վարույթով պարզվել է, որ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը 2010 թվականին Արարատի մարզի համայնքներից մեկին նվիրատվությամբ հանձնել է Հունաստանի Հանրապետությունից որպես բարեգործություն ստացված՝ նիդերլանդական արտադրության, 95 մլն դրամ գործարանային արժեքով՝ համակցված կերի հոսքագիծ: Հոսքագիծը նշված արժեքով հաշվառվել է Համայնքի գույքային հաշվեկշռում:Համայնքի նախկին ղեկավարը, խախտելով Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2010 թվականի հուլիսի 23-ի որոշման պահանջները, այն է՝սարքավորումը չի կարող օգտագործվել շահույթ ստանալու նպատակով եւ պետք է ծառայի բացառապես ի շահ համայնքի բնակչությանը, հոսքագիծը հանձնել է իր եղբորը փաստացի պատկանող՝ Արարատի մարզի Արալեզ համայնքում գործող ընկերությանը, որտեղ այն 9 տարի շարունակ շահագործվել է ընկերության արտադրական կարիքների համար:

Համայնքի նախկին ղեկավարը 2019 թվականին նախաձեռնել է գույքն ուղղակի վաճառքով օտարելու գործընթաց: 95 մլն դրամ հաշվեկշռային արժեք ունեցող համայնքային գույքը գնահատվել է 19 մլն դրամ եւ համայնքի ավագանու՝2019 թվականի հուլիսի 11-ի թիվ 24-Ա որոշմամբ՝ նույն ամսվա 26-ին ուղղակի վաճառքով օտարվել է իր եղբորը պատկանող ընկերությանը: Դատախազը 2022 թվականի մարտի 22-ին համայնքի նախկին ղեկավարի նկատմամբ հարուցել է հանրային քրեական հետապնդում՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը): 2024 թվականի հունվարի 30-ին համայնքի նախկին ղեկավարն ամբողջությամբ վերականգնել է համայնքին եւ պետությանը պատճառված՝116 մլն դրամի վնասը:

ՀՈՍՊԻՏԱԼԱՑՎԵԼ ԵՆ

Հունվարի 30-ին՝ ժամը 08:32-ին, Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Ուջան-Ագարակ ավտոճանապարհին տեղի է ունեցել ՃՏՊ. կա արգելափակված քաղաքացի, անհրաժեշտ է փրկարարների օգնություն: Դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ: Պարզվել է, որ Աշտարակ-Ուջան ավտոճանապարհի 11-րդ կմ-ին բախվել են «Mercedes-Benz» (վարորդ՝Հ. Ք., ծնված 1968 թ.) եւ «VAZ» (վարորդ՝Ջ. Ս., ծնված 1960թ.) մակնիշների ավտոմեքենաները:

Մինչ փրկարարների՝կանչի վայր հասնելը «VAZ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը եւ ուղեւոր Կ. Ս.-ն (ծնված 1960 թ.) հոսպիտալացրել են բժշկական կենտրոն, որտեղ բժիշկները տուժածների առողջական վիճակը գնահատել են բավարար:

Փրկարարները հոսանքազրկել են ավտոմեքենաները եւ փակել գազի բալոնների փականները:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ՆՈՐԱԹՈՒԽ ՊԵՏԵՐԻՆ

Հունվարի 29-ին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետ, արդարադատության գնդապետ Ամբակում Գրիգորյանը «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի անձնակազմին է ներկայացրել հիմնարկի նորանշանակ պետ, արդարադատության գնդապետ Արտեն Արզումանյանին, այնուհետեւ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում ներկայացրել է նորանշանակ պետ Լաեր Գրիգորյանին:

Այս մասին հայտնում են ՀՀ քրեակատարողական ծառայությունից:

Ծառայության պետը նախ շնորհավորել է նորանշանակ պետերին, մաղթել բարի ծառայություն, ապա իր խոսքում հատկապես ընդգծել է կոռուպցիայի եւ քրեական ենթամշակույթի դեմ պայքարի անհրաժեշտությունն ու կարեւորությունը: Ամբակում Գրիգորյանը հավաստիացրել է, որ ծառայությունը հետամուտ է լինելու ծառայողների՝ օրենքով վերապահված լիազորությունների լիարժեք կատարմանը, եւ ցանկացած օրինախախտ դեպք կստանա իր համարժեք պատասխանը:

Ամբակում Գրիգորյանը միաժամանակ նշել է, որ պատրաստ է աջակցել ծառայողներին ծագած խնդիրների լուծման եւ նախաձեռնությունների իրագործման հարցում:

Նույն օրը Քրեակատարողական ծառայության պետի տեղակալ, արդարադատության գնդապետ Թադեւոս Նալբանդյանը «Սեւան» քրեակատարողական հիմնարկի անձնակազմին է ներկայացրել հիմնարկի նորանշանակ պետ, արդարադատության գնդապետ Արտակ Ղազարյանին:

Թադեւոս Նալբանդյանը նշել է, որ Արտակ Ղազարյանն իր գործի գիտակն է, եւ հույս հայտնել, որ կշարունակեն համատեղ ուժերով իրականացնել իրենց առջեւ դրված նպատակները:

Նորանշանակ պետերը շնորհակալություն են հայտնել ցուցաբերած բարձր վստահության համար եւ հավաստիացրել, որ պատվով կշարունակեն աշխատանքը քրեակատարողական համակարգում:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 29-ից 30-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 50 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՌՈՒՍԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑԻՉ ՉՈՒՆԵՆ

Բարեկամավանը Տավուշի մարզի ամենահեռավոր, սահմանամերձ գյուղերից է, որտեղից խորհրդային տարիներին ու Հայաստանի անկախության շրջանում մեծ արտագաղթ է եղել, բարեկամավանցիների զգալի մասը հաստատվել է Ռուսաստանի Ստավրոպոլի երկրամասում: 1970-ական թվականների կեսերին Բարեկամավանի ութամյա դպրոցն ուներ 330 աշակերտ, իսկ բարեկամավանցի 9-րդ եւ 10-րդ դասարանների աշակերտները հաճախում էին Նոյեմբերյանի եւ Կոթիի միջնակարգ դպրոցներ: Մինչեւ 2023 թվականին Արցախի վերջնական հայաթափումը Բարեկամավանի միջնակարգ դպրոցն ուներ 15 աշակերտ: Արցախի տարբեր վայրերից Բարեկամավանում հաստատվել է 9 ընտանիք, որոնց գյուղի առանձնատները տրվել են ձրի, առանց վարձավճարի: Արցախից Նոյեմբերյան համայնքի Բարեկամավան գյուղում հաստատված ընտանիքների երեխաների շնորհիվ Բարեկամավանի դպրոցի աշակերտների թիվը 15-ից դարձել է 25: Գյուղի դպրոցի երկարամյա տնօրեն Աստղիկ Ազատյանը հայտնեց, որ իրենց գյուղում բնակվող եւս 2 արցախցի երեխա կա, որոնց ինքը հանդիպել, հորդորել է դպրոց հաճախել: Բարեկամավանի դպրոցի աշակերտների թիվը կարող է ավելի մեծանալ, քանզի Նոյեմբերյան համայնքի Բերդավան գյուղում վարձով բնակվող արցախցի մի ընտանիք ցանկություն է հայտնել առանց բնակվարձի բնակվել Բարեկամավանում. այդ ընտանիքը դպրոցահասակ 3 երեխա ունի: Բարեկամավանի դպրոցում որոշ առարկաներ՝ Տեխնոլոգիա, Ֆիզկուլտուրա, Երգ, դասավանդում են բարձրագույն, սակայն ոչ մասնագիտական կրթությամբ ուսուցիչներ: Անցյալ տարվա վերջից Բարեկամավանի դպրոցում թափուր է Ռուսաց լեզվի եւ գրականության ուսուցչի հաստիքը. այդ առարկան չի դասավանդվում: Այդ դպրոցում մինչ այդ Ռուսաց լեզու եւ գրականություն դասավանդում էր հարեւան Կոթի գյուղից ժամանող ուսուցչուհին, որն ուներ միջին մասնագիտական կրթություն: Այդ ուսուցչուհին մասնակցել է ուսուցիչների կամավոր ատեստավորմանը, բացասական արդյունք ունեցել: Աստղիկ Ազատյանը հայտնեց, որ ռուսաց լեզվի եւ գրականության ուսուցչի թափուր տեղի մասին ինքը հայտնել է Տավուշի մարզպետարան, ԿԳՄՍ նախարարություն, սակայն հարցը չի լուծվել: Երեւանում վերաբնակված արցախցի մի ուսուցչուհի ցանկացել է Բարեկամավանում դասավանդել Ռուսաց լեզու եւ գրականություն, սակայն պայման է դրել, որ Բարեկամավանում իր կացարանն ունենա մշտական տաք եւ սառը ջուր, այլ պայմաններ, ուստի չի համաձայնել ապրել, աշխատել հեռավոր գյուղում: Ա. Ազատյանը հայտնեց, որ 100-ից պակաս աշակերտ ունեցող դպրոցներում քիչ դասաժամ ունեցող ուսուցիչներին լրացուցիչ տրվում է կես հաստիքի ռոճիկ, ինչը լինելու է նաեւ Ռուսաց լեզվի ուսուցչի դեպքում, ինքն էլ պատրաստ է ուսուցչի ցանկության դեպքում այդ առարկայի 11 դասաժամը բաշխել շաբաթվա 2 օրվա կտրվածքով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

5 ՄԼՐԴ 887,4 ՄԼՆ ԴՐԱՄ՝ ՇԻՆԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գեղարքունիքի մարզում 2023 թվականին ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության պատվիրատվությամբ հիմնանորոգվել է 36,4 կիլոմետր, միջին նորոգման է ենթարկվել 4 կիլոմետր, մակերեսային մշակման՝ 6,4 կիլոմետր երկարության միջպետական, հանրապետական, մարզային նշանակության ճանապարհներ:

2023 թվականին իրականացվել են Մարտունի համայնքի Մյասնիկյան փողոցի մայթերի կառուցման, Մ-10, Սեւան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի 66-80-րդ կմ հատվածի, Հ-39, /Մ-10/-Գավառ-/Մ-10/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի 4-7-րդ կմ հատվածի, Մ-10, Սեւան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի 1-17-րդ կմ հատվածի, Հ-30, /Մ-4/ - Ճամբարակ - /Մ-14/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի 32-35-րդ կմ հատվածի, Հ-30, Մոտեցում Արծվաշենին հանրապետական նշանակության ավտոճանապարհի 5,7 կմ հատվածի, Լճաշեն համայնքի Փոստի մոտից դեպի Կիկլոպյան ամրոց տանող ճանապարհի 1.2 կմ երկարությամբ հատվածի, /Հ-30/ (Թթուջուր) - /Հ-36/ (Նավուր) հանրապետական նշանակության ավտոճանապարհի 7 կմ հատվածի, ինչպես նաեւ Մ-4 Երեւան-Սեւան-Իջեւան-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 74-80-րդ կմ հատվածի հիմնանորոգման եւ Հ-39, /Մ-10/-Գավառ-/Մ-10/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի 4 կմ հատվածի միջին նորոգման աշխատանքները:

2023 թվականին մեկնարկել են Տ-4-13, /Հ-39//Գավառ/-Գանձակ-Սարուխան-Գեղարքունիք ավտոճանապարհի 12,9կմ հատվածի, Հ-53, /Մ-4/ - Սեմյոնավկա - /Մ-4/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+100 հատվածի կամրջի եւ Սեւանի տրանսպորտային հանգույցի հիմնանորոգման աշխատանքները, որոնք նախատեսվում է ավարտել 2024 թվականի ընթացքում:

2023 թվականի ընթացքում շինարարական աշխատանքների իրականացման համար ներդրվել է 5 միլիարդ 887,4 միլիոն դրամ:

Իսկ Գեղարքունիքի մարզում ՀՀ կառավարության կողմից 2022-2023 թվականներին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում 2023 թվականին կառուցվել կամ վերանորոգվել են 32.6 կմ ճանապարհներ եւ փողոցներ, սալարկվել են 11 հազար 869 քառակուսի մետր մակերեսով համայնքային նշանակության փողոցներ եւ մայթեր:

Ճանապարհների անցանելիությունը տարվա բոլոր եղանակներին ապահովելու նպատակով 2023 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության կողմից 2023 թվականին մարզում իրականացվել են միջպետական եւ հանրապետական նշանակության ավտոճանապարհների 323,9 կմ ընթացիկ ամառային եւ 392,4 կմ ձմեռային պահպանության աշխատանքներ, որի արդյունքում ծախսվել է 866,3 միլիոն դրամ, իսկ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է մարզային նշանակության 176,8 կմ ընթացիկ ամառային եւ 207,4 կմ ձմեռային պահպանության աշխատանքներ, որի արդյունքում ծախսվել է 222,8 միլիոն դրամ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

64 ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

ՀԵՌՈՒՍՏԱԼՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ «Տեսալսողական մեդիայի մասին» եւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքներով սահմանված վարչարարության իրականացման արդյունքում 2023 թվականին հարուցվել է 64 վարչական վարույթ: Այս մասին հունվարի 30-ին կայացած մամուլի ասուլիսին ասաց Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի նախագահ Տիգրան Հակոբյանը՝ հավելելով, որ հարուցված վարույթներից 57-ը հանձնաժողովի նախաձեռնությամբ է եղել, իսկ 7-ը՝ բողոքների համաձայն:

«Ամբողջ աշխարհում լրիվ հակառակ պատկերն է. վարույթների մեծ մասը հարուցվում է հանրության, քաղաքական ուժերի, ֆիզիկական անձանց բողոքների հիման վրա»,- նշեց Հակոբյանը՝ նկատելով, որ թերությունների մասին ահազանգերը ներկայացվում են միայն մամուլում կամ սոցիալական ցանցերում՝ առանց դիմելու կարգավորող մարմին:

Ըստ Հակոբյանի՝ վերջին հինգ տարիներին 18 անգամ ավելի շատ վարչական վարույթ է հարուցվել, որը 2019-2023 թվականներին կազմել է 232 վարույթ, իսկ 2013-2018-ին՝ 13:

«Շատ ժամանակ մեզ մեղադրում են, որ մենք շատ կոշտ ենք մոտենում հեռուստաընկերությունների գործունեությանը, այնինչ այդպես չէ, որովհետեւ վարչական վարույթներ բացվում են տասնյակ ուղղություններով»,- ասաց հանձնաժողովի նախագահը՝ նշելով, որ հեռուստառադիոընկերությունները համերաշխ են հանձնաժողովի որոշումների հետ, որոնք ոչ միայն ներպետական, այլ նաեւ միջազգային նշանակություն ունեն:

Ըստ Հակոբյանի՝ վերջին երկու-երեք տարիներին Հայաստանում հեղինակային իրավունքների խախտման վերաբերյալ արտերկրից գրեթե ոչ մի բողոք չի եղել:

Նրա խոսքով՝ վարչական վարույթների հարուցման պատճառ են հանդիսացել հեղինակային իրավունքների խախտումները, մեկ եթերային ժամվա ընթացքում ցուցադրվող գովազդի տեւողության չպահպանումը, տարեկան հասույթի մասին տեղեկատվություն չներկայացնելը, անչափահասների մտավոր եւ ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները, ինչպես նաեւ սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող բովանդակության հեռարձակումը, հայհոյանքը եթերում եւ հանրօգուտ հաղորդումների առնվազն 20 տոկոսի սահմանաչափը չպահպանելը:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 11 պատահար. 11 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ

ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ

Երեւանում խելամիտ գներով վարձով տուն գտնելը դարձել է ոչ միայն դժվար, այլ որոշ դեպքերում՝ անհնար:

Բանն այն է, որ Ռուսաստանից, Հնդկաստանից եւ այլ երկրներից դեպի մեր երկիր միգրանտների մեծ ներհոսքին եւ Լեռնային Ղարաբաղից 100 հազարավոր բռնի տեղահանված հայերի ֆոնին կրկնապատկվել, որոշ դեպքերում եռապատկվել են վարձով տների գները, ինչը, սակայն, որեւէ կերպ չի ազդել առաջարկվող պայմանների բարելավման վրա:

Թանկ վարձավճարներին գումարվել է նաեւ օրենքի նոր կարգավորումը, որով վարձակալության տրված տան համար ֆիզիկական անձինք պարտավոր են վճարել եկամտահարկ՝ վարձավճարի 10%-ի չափով:

Սոցիալական ցանցերում արված հարցման արդյունքները եւս փաստում են, որ ովքեր վերջին շրջանում տուն վարձակալելու ցանկություն են ունեցել, տանտերերից լսել են նույն պատասխանը՝ տան գինն ավելացել է՝ հաշվի առնելով նոր օրենսդրական կարգավորումներն ու հարկային դաշտ մտնելու հանգամանքը:

Հարցման մասնակիցներից 27-ամյա Ս. Կ.-ն, որը չի ցանկացել իր անունազգանունն ամբողջությամբ նշվի, նշում է, որ վերջին 7 տարին կնոջ եւ երեխաների հետ վարձակալական հիմունքներով Երեւանում է բնակվում, եւ այժմ վարձով բնակարան գտնելու խնդիրների փաթեթին ավելացել է եւս մեկը՝ հարկերը:

«Առաջ էլ էինք մեծ դժվարությամբ վարձով տուն գտնում, ընդ որում՝ առաջարկվող պայմաններն ու պահանջվող գինը ոչ մի կապ չունեն իրար հետ: Մարդիկ իրենց ավտոտնակը, նկուղային հարկերը կամ մեկ սենյականոց բնակարանը մի քիչ կահավորում, անունը «վարձով տուն» են դնում ու որոշում միանգամից հարստանալ: Մի քանի օր առաջ եմ նոր տուն տեղափոխվել, որը գտնելու համար, չափազանցրած չեմ լինի, եթե ասեմ՝ հարյուրավոր զանգեր եմ արել ամենատարբեր տան սեփականատերերի, անշարժ գույքի գործակալություններ եւ գտել եմ՝ սոցիալական հարթակներում հայտարարություններ դնելով»,- ասում է քաղաքացին:

Անդրադառնալով վարձակալությամբ տրվող բնակարանների դեպքում նոր օրենսդրական կարգավորումներին՝ վերջինս նկատում է՝ առաջին հայացքից այն վարձով բնակարան տվողներին որոշակիորեն պետք է կաշկանդեր գին սահմանելիս, սակայն հակառակն է եղել:

«Your dream home» անշարժ գույքի գործակալության տնօրեն Դավիթ Եղիազարյանն էլ մեզ հետ զրույցում ասում է, որ վարձով տրվող բնակարանների վերաբերյալ նոր օրենսդրական կարգավորումը շատ քիչ է ազդել վարձավճարի բարձրացման վրա:

«Ոլորտի միակ թերությունն այն է, որ շուկայի վերահսկողություն չկա. ով ինչ ուզում, անում է, ինչ գին ուզում, դնում է, անգամ մենք չենք կարողանում վերահսկել: Հոյակապ կլինի, եթե վերահսկող մարմին լինի, որը որ կգբաղվի դրանով»,- կարծում է նա:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

«ԷՐԱԶՄՈՒՍ+»

ԹՎԱՅԻՆ ՈՒ ԿԱՆԱՉ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը մասնակցել է Երեւանի պետական համալսարանում երեկ մեկնարկած «Էրազմուս+» ծրագրի շրջանակում իրականացվող KPI4HE նախագծի աշխատաժողովին:

Ծրագիրը նպատակ ունի բարելավելու բարձրագույն կրթության համակարգի կառավարումն ու համալսարանների ռազմավարական պլանավորումը, որոնք նպաստելու են որակյալ, ներառական, թվային ու կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթությանը Հայաստանում: Նախարարի տեղակալը ողջունել է ծրագրի մեկնարկն ու կարեւորել ԿԳՄՍ նախարարության ներգրավվածությունը ծրագրին, ինչպես նաեւ այն փաստը, որ աշխատաժողովի համակարգողը ԵՊՀ-ն է, իսկ դրանում ընդգրկված են նաեւ հայաստանյան մի քանի այլ բուհեր, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Ինֆորմատիկայի եւ ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը, գերմանական երկու եւ իտալական մեկ բուհ:

«Այս ծրագիրը շատ տեղին է, քանի որ գործունեության առանցքային ցուցանիշների մշակումն իսկապես համահունչ է կրթական լայնածավալ բարեփոխումներին, որոնք իրականացվում են Հայաստանում, մասնավորապես՝ բարձրագույն կրթության ոլորտում: Սա հնարավորություն կտա զարգացնելու առանձին բուհերի ռազմավարական պլանավորման կարողությունները, մեծացնելու դրանց չափելիությունը: Գործունեության առանցքային ցուցանիշների ազգային շրջանակի (ԳԱՑԱԾ) մշակումը հնարավորություն կտա որակական չափանիշներով մեր կրթական համակարգը դարձնել ավելի չափելի՝ դրանով իսկ այն համադրելի դարձնելով Բոլոնյան գործընթացին մասնակից մյուս երկրների համապատասխան համակարգերին», - ասել է Արթուր Մարտիրոսյանը: Շեշտելով, որ ծրագիրը կարեւոր է նաեւ Հայաստան-ԵՄ երկխոսության շրջանակում՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալը նշել է, որ 2022-2023 թվականներին «Էրազմուս+» ծրագրով բուհական մակարդակում իրականացվել է 4, իսկ 2023- 2024 թվականին՝ 8 ծրագիր, որոնցից մեկն էլ «Հայաստանում ներառական, թվային ու կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթության պատշաճ կառավարման եւ որակի համար գործունեության առանցքային ցուցանիշների ազգային շրջանակի (ԳԱՑԱԾ) ստեղծում» ծրագիրն է:

ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, ողջունելով ներկաներին, շնորհակալություն է հայտնել ԵՄ-ին ծրագրի իրականացմանն աջակցելու համար: Նա հույս է հայտնել, որ ծրագրի դրական արդյունքները շուտով տեսանելի կլինեն: ԵՊՀ ռեկտորի խոսքով՝ ծրագիրը կարեւոր եւ դրական ներգործություն կունենա կրթական ծրագրերի,

ադմինիստրատիվ աշխատանքների եւ կառավարման պլանավորման հարցում, ավելի ինստիտուցիոնալ հիմքերի վրա կդնի կառավարման համակարգը Երեւանի պետական համալսարանում եւ գործընկեր բուհերում:

«KPI4HE» ծրագրով նախատեսվում է բարձրագույն կրթության գործունեության առանցքային ցուցանիշների ազգային շրջանակի (ԳԱՑԱԾ) մշակման, ներդրման, ինստիտուցիոնալ հետազոտությունների կառուցակարգերի զարգացման ու պլանավորման ծառայությունների գործարկման, ինչպես նաեւ հաստատությունների հավաստագրման պետական չափանիշների վերանայում, առաջարկների մշակում:

Աշխատաժողովի համակարգողը ԵՊՀ-ն է. մասնակցում են ՀՀ 5, ինչպես նաեւ մի քանի եվրոպական բուհեր (Դրեզդենի տեխնիկական համալսարան, Օլդենբուրգի համալսարան, Ջենոայի համալսարան):

«Հայաստանում ներառական, թվային ու կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթության պատշաճ կառավարման եւ որակի համար գործունեության առանցքային ցուցանիշների ազգային շրջանակի (ԳԱՑԱԾ) մշակում» (KPI4HE) ծրագրի մեկնարկային աշխատաժողովը կշարունակվի մինչեւ հունվարի 31-ը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ՇՏԱՊՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ՄՈՊԵԴՆԵՐՈՎ

Երեւանի քաղաքապետարանը հանդես է գալիս նոր նախաձեռնությամբ, որն ուղղված է Շտապօգնության ծառայության ծանրաբեռնվածությունը թեթեւացնելուն, կանչերին արագ արձագանքելուն: Մասնավորապես՝ շուտով կգործարկվեն շտապօգնության զանգերին արձագանքելու համար նախատեսված հատուկ մոպեդներ:

Մանրամասնելով նախաձեռնությունը՝ Երեւանի քաղաքապետարանի առողջապահության վարչության պետի պաշտոնակատար Դավիթ Կարապետյանը տեղեկացրեց, որ մոպեդներով շտապօգնության ծառայություն մատուցելու պարագայում չի նախատեսվում բուժառուներին բուժհաստատություն տեղափոխել: Մոպեդով օգնություն կցուցաբերվի այն բուժառուներին, որոնք չունեն քրոնիկական հիվանդություններ եւ հիվանդանոցային բուժման կարիք:

«Մենք պետք է հասկանանք, թե ինչ բուժառուի հետ գործ ունենք: Օրինակ՝ այն բուժառուները, որոնք քրոնիկական հիվանդություններ եւ հիվանդանոցային բուժման կարիք չունեն, բայց բարձր ջերմություն ունեն, այս պարագայում բուժակը մոպեդով ավելի արագ եւ օպերատիվ կարող է հասնել տեղ, չափել ջերմությունը, անհրաժեշտության դեպքում խորհրդակցել բժշկի հետ եւ տալ համապատասխան դեղորայք»,-ասաց նա:

Կարապետյանը, անդրադառնալով բոլոր այն հարցերին, թե ինչպես են մոպեդով բուժառուներին տեղափոխելու բուժհաստատություն, պատասխանեց, որ մոպեդով ոչ ոքի չեն տեղափոխելու: Ըստ նրա՝ մոպեդն ընդամենը ծառայելու է խցանումների ժամանակ եւ հիվանդանոցային բուժում չպահանջող դեպքերի ժամանակ, ինչը կորոշվի զանգերի ֆիլտրման միջոցով:

«Ուսումնասիրել ենք որոշ երկրների փորձը՝ Իսրայելի, Նորվեգիայի, Վրաստանի եւ Իտալիայի: Այս բոլոր երկրներն ունեն իտալական մոպեդներ, որոնք վարելը շատ հեշտ է, ինչպես նաեւ ունեն բժշկական հագեցվածության ուղղվածություն: Մոպեդներն ունեն ամրացված պայուսակներ, սարքեր, որոնք բուժակին կամ բժշկին հնարավորություն կտան օգնություն ցույց տալ կամ որոշակի ախտորոշում կատարել»,-ասաց Կարապետյանը:

Նա նշեց, որ այժմ մասնագետների հետ կատարվում են ուսումնասիրություններ, քննարկումներ, վերջնական արդյունքը լինելու դեպքում հանրությանը մանրամասն կտեղեկացնեն:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՑՈՒՅԱՀԱՆԴԵՄՆԵՐ, ՊԼԵՆԵՐՆԵՐ, ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐ...

Հայաստանի նկարիչների միությունը, դահիճանելով ավանդույթները, տարվա ընթացքում իր հարկի տակ է համախմբելու տեղացի ու արտերկրից ժամանած երիտասարդ եւ բազմավաստակ ստեղծագործողների. կազմակերպելու է ցուցահանդեսներ, պլեներներ, վարպետության դասեր եւ այլ կարեւոր միջոցառումներ:

Միության նախագահ Սուրեն Սաֆարյանն ասում է՝ աշխատում են ջանք ու եռանդ չխնայել, որպեսզի կառույցը մշտապես ուշադրության կենտրոնում լինի:

«Ընթացիկ ցուցահանդեսներ շատ կլինեն, սակայն փետրվարի 8-ին բացվելու է «Վարկանիշային ցուցահանդես»-ը, որին մասնակցելու են միության անդամ չհանդիսացող արվեստագետները: Այս ցուցահանդեսն իրականանում է ժյուրիի մասնակցությամբ: Բոլոր նրանք, ովքեր կընտրվեն ժյուրիի կողմից, կստանան մեկ միավոր եւ, այդ միավորները հավաքելով, կկարողանան դիմել Հայաստանի նկարիչների միության անդամակցության համար: Հետո կմեկնարկի «Գարնանային սալոն» ցուցահանդեսը, որի կազմակերպումն ավանդույթ է դարձել: Ցուցադրությանը մասնակցում են միայն միության անդամները»,-հիշեցնում է Սաֆարյանը:

2024-ին նախատեսվում են նաեւ հոբելյանական ցուցահանդեսներ. նշվելու են Վալենտին Պոդպոմոգովի, Վլադիմիր Սահակյանի, Լեւոն Կոջոյանի, Ռուբեն Ադալյանի, Հաղթանակ Շահումյանի, Խաչատուր Ազիզյանի եւ այլ նկարիչների հոբելյաններ:

Իսկ այս օրերին Նկարիչների միություն այցելելով՝ հնարավոր կլինի ծանոթանալ երջանկահիշատակ Վահան Քոչարի 75-ամյակին նվիրված ցուցահանդեսին, որում ընդգրկված են Քոչարի՝ 15-ից մինչեւ 71 տարեկանը ստեղծած կտավները:

Սուրեն Սաֆարյանը շատ է կարեւորում համագործակցությունը միջազգային գործընկերների հետ: Այդ կապն ամրապնդելու նպատակով միությունը նախաձեռնելու է միջազգային պլեներ-սիմպոզիում: Այն կանցկացվի հուլիսին Նկարիչների ստեղծագործական տանը, որը Սեւանի ափին է՝ Շորժայում: Պլեներ-սիմպոզիումը, որին մասնակցելու են ութ երկրից նկարիչներ, կյանքի կկոչվի ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

«Այս տարի մեր առաջ նպատակ ենք դրել միության մասնաճյուղերում իրականացնել տարբեր նախագծեր, ցուցահանդեսներ, որ ակտիվացնենք մարզային մշակութային կյանքը: Շատ ծրագրեր կան, որոնց վրա աշխատում ենք, սակայն մինչեւ չեն հստակեցվում, նախընտրում եմ չխոսել դրանց մասին»,-ասում է միության նախագահն ու հավելում՝նախատեսում են հյուրընկալել «Արմենպրես» պետական լրատվական գործակալության «Դարի վավերագրություն» խորագրով ցուցահանդեսը, որում հնարավոր կլինի տեսնել լուսանկարներ, որոնք անդրադառնում են երկրի կարեւոր իրադարձություններին, ականավոր մարդկանց, ողբերգական եւ հաղթական դրվագներին:

Սաֆարյանը հավաստիացնում է՝ ինչպես խորհրդային տարիներին, այնպես էլ մեր օրերում նկարիչները ձգտում են անդամակցել Հայաստանի նկարիչների միությանը:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԵԿՆԵԼ ԵՆ ԹԲԻԼԻՍԻ

Հայաստանի մարմնամարզության հավաքականը հունվարի 30-ին մեկնել է Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսի՝ ուսումնամարզական հավաքի:

Այս մասին հայտնեց Հայաստանի մարմնամարզության հավաքականի գլխավոր մարզիչ Հակոբ Սերոբյանը:

Ուսումնամարզական հավաքը կլինի երկշաբաթյա եւ կեզրափակվի փետրվարի 13-ին: Հավաքականը հենց Թբիլիսիից էլ կմեկնի Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրե՝ մասնակցելու մարմնամարզության աշխարհի գավաթի խաղարկության առաջին փուլին:

Մարմնամարզության հավաքականում են Արթուր Դավթյանը, Հարություն Մերդինյանը, Արթուր Ավետիսյանը, Վահագն Դավթյանը եւ Գագիկ Խաչիկյանը: Մարզիչներն են Հայկ Նազարյանը եւ Աշոտ Գասպարյանը:

«ՓՅՈՒՆԻԿ»-Ը՝ ԱՌԱՔԱՏԱՐ

Հայաստանի ֆուտբոլի առաջնության երկրորդ հատվածը կվերսկսվի փետրվարի 22-ին:

Պրեմիեր լիգայի 21-րդ տուրի շրջանակներում կկայանան «Շիրակ»-ԲԿՄԱ, «Նոա»-«Ուրարտու», «Ալաշկերտ»-«Վան», «Արարատ-Արմենիա»-«Փյունիկ», «Արարատ»-«Վեստ Արմենիա» հանդիպումները:

Հայաստանի ֆուտբոլի առաջնության 20-րդ տուրից հետո մրցաշարային աղյուսակի առաջատարը 48 միավորով «Փյունիկ»-ն է: Երկրորդ եւ երրորդ տեղերը զբաղեցնում են «Նոա»-ն եւ «Արարատ-Արմենիա»-ն, որոնք ունեն 42-ական միավոր: 4-րդ տեղում «Ուրարտու»-ն է, որը հավաքել է 34 միավոր: Երկու միավոր քիչ՝ 32 միավոր ունի «Ալաշկերտ»-ը: Այնուհետ միմյանց հաջորդում են ԲԿՄԱ-ն, «Արարատ»-ը, «Վեստ Արմենիա»-ն, «Վան»-ը, «Շիրակ»-ը:

ԴԱՀՈՒԿԱՎԱԶՔԸ՝ ՀՀ-ՈՒՄ

Շիրակի մարզի Աշոցք համայնքում հունվարի 30-ին մեկնարկել է Հայաստանի դահուկավազքի 2024 թվականի առաջնության առաջին փուլը:

Այս մասին հայտնեց Հայաստանի դահուկասպորտի ֆեդերացիայի նախագահ Գագիկ Սարգսյանը:

«Եթե համեմատենք նախորդ տարիների հետ, ապա մասնակիցների քանակը քիչ է, սակայն մեր առաջատարները կմասնակցեն Հայաստանի առաջնությանը: Նրանք լրջորեն պատրաստվել են մրցաշարին»,-ասաց Սարգսյանը:

Ֆեդերացիայի նախագահի խոսքով՝ առաջնության առաջին փուլում արտերկրից մասնակիցներ չկան, սակայն փետրվարին սպասվող առաջնությանը, հնարավոր է, մասնակիցներ լինեն նաեւ արտերկրից: Մասնավորապես, մրցաշարին մասնակցելու ցանկություն է հայտնել Իրանի հավաքականը:

«Ձյան պակասի խնդիր ունենք, բայց լիահույս ենք, որ այս խնդիրը կլուծվի առաջիկայում»,-առանձնացրեց նա:

Հայաստանի առաջնության առաջին փուլում տղամարդիկ կմրցեն 10 կմ դասական ոճում եւ արագավազքում, իսկ կանայք՝ 5 կմ ազատ եւ դասական ոճերում:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերն ըստ ներկայացված հերթականության՝

- Կոտայքի մարզ, համայնք Բյուրեղավան, Բյուրեղավան ք., Վ. Սարգսյան փողոց, 26 շենք, 38 հասցեում գտնվող 73,4 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 19840000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Սեւան, Սեւան . Սեւանեցու փող., 9/41 հասցեում գտնվող 30,91 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 5950000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Անի, Մարալիկ ք., 1-ին թաղամաս, 2 շենք, 13 հասցեում գտնվող 68,08 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 7700000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի ք., Սանահին Սարահարթ թաղամաս, 2/գ շենք, 2 հասցեում գտնվող 67 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝4100000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Սեւան, Սեւան ք., Կոմիսարների փողոց, 16 հասցեում գտնվող 77,2 քմ բնակելի տուն, 142,1 քմ ավտոտնակ, 54 քմ անասնաշենք, 19,25 քմ անասնաշենք, 15 քմ ցախանոց եւ 0,1477 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 21140000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Ախուրյան, գյուղ Ախուրյան, Ջ. Անդրանիկի փողոց, 9-րդ անցում, 25 հասցեում գտնվող 85,69 քմ բնակելի տուն, 3,87 քմ /3,48 խմ/ պարիսպ, 1,08 քմ /0,97 խմ/ պարիսպ եւ 0,10084 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 13640000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Կենտրոն, Այգեստան 10-րդ փողոց, 27 հասցեում գտնվող 215,6 քմ բնակելի տուն, 61 քմ ավտոտնակ եւ 0,03683 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 237300000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Նոր Խարբերդի այգեգործական տարածք, 2-րդ փողոց, 82/26 հասցեում գտնվող 199,93 քմ բնակելի տուն, 47,59 քմ օժանդակ շինություն եւ 0,05 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 31600000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 16.02.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 22.03.2024թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բիէսթի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով:Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

● *Փետրվարի 3-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Մատնաչափիկը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-2000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ինչպես եւ որ լեզվով է իրականացվում ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդունումն ու ուսուցումը հասարակությունում:

Անի Մխիթարյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ ԿԳ նախարարի N 1640-Ն /24.11.2010թ./ հրամանով հաստատված «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման եւ հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու, ազատելու կարգի» 5-րդ կետի համաձայն՝ «Ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդունումը հաստատություն կարող է կատարվել սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող հաստատությունում (դասարանում), իսկ դրա բացակայության դեպքում ուսուցման լեզվի ընտրությունը կատարում է սովորողի ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը):

Եթե ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող հաստատությունում լիցենզիայով տրված սահմանային տեղերը լրացած են, եւ տվյալ բնակավայրում բացակայում է այլ հաստատությունում ազգային (մայրենի) լեզվով ուսուցման հնարավորությունը, ապա սովորողի ընդունելությունը տվյալ հաստատություն իրականացվում է՝ անկախ լիցենզիայով տրված սահմանային տեղերի սահմանափակումից»:

ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Օտարերկրյա քաղաքացիները, երկքաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք (նրանց օրինական ներկայացուցիչը), ինչպես նաեւ այն դեպքում, երբ ծնողներից մեկն է Հայաստանի Հանրապետության քաղաքացի, իրենք են ընտրում իրենց երեխայի ուսուցման լեզուն:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ՝ երբ է մերժվում կենսաթոշակ նշանակելը:

Սիրան Մնացականյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կենսաթոշակ նշանակելը մերժելու մասին որոշում կայացվում է, եթե՝

- անձը չունի կենսաթոշակի իրավունք,
- կենսաթոշակի իրավունք ունեցող անձը, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, հաշվառված չէ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով,
- ներկայացված փաստաթղթերը եւ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները բավարար չեն անձին կենսաթոշակ նշանակելու համար:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակ նշանակելու համար բնակության վայրի մասին տեղեկանք չի պահանջվում, բավարար են անձնագրում քաղաքացու անձնական տվյալների եւ նրա հաշվառման վայրի մասին նշում պարունակող էջերի պատճենները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Մեծ Բրիտանիայում ճանապարհների ասֆալտապատ ծածկը կվերանորոգեն ռոբոտները:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	-14 - 18 - 4 - 7	Արարատ	- 4 - 7 + 3 + 5
Կոտայքի լեռներ	- 14 - 18 - 3 - 6	Արմավիր	- 5 - 7 + 3 + 5
Կոտայքի նախալեռներ	- 6 - 7 - 1 + 1	Վայոց ձորի լեռներ	- 13 - 15 - 3 - 4
Գեղարքունիք	- 13 - 17 - 3 - 6	Վայոց ձորի նախալեռներ	- 4 - 7 + 3 + 5
Լոռի	- 9 - 13 - 1 + 2	Սյունիքի հովիտներ	- 2 - 7 + 1 + 4
Տավուշ	- 3 - 8 - 1 + 5	Սյունիքի նախալեռներ	- 9 - 10 0 - 3
Արագածոտնի լեռներ	- 14 - 18 - 3 - 6	ԼՂՀ	- 6 - 8 0 - 3
Արագածոտնի նախալեռներ	- 6 - 8 - 1 + 2	Երեւան	0 - 2 0 + 2

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ________
Ազգանուն՝ ________
Առաքման հասցե՝ ________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **30.1.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*